Անառակ որդու վերադարձը

Կրտսեր որդի

Ես հոգնել էի, այնպես, ինչպես հոգնել եք կամ դեռ կհոգնեք դուք: Հոգնել էի եղբորիցս, որը հորս սիրո գերին էր, հորիցս, որն ինձ տվել էր ամեն ինչ (պատմուճան, մատանի, կոշիկներ, անասուններ…), բայց փոխարենը զրկել ազատությունից: Ես զբաղվում էի անասնապահությամբ, բայց սրտումս զգում էի, որ ավելիին եմ արժանի: Մտքումս սեպվել էր մանկական այն հիշողությունը, երբ դեռ 12 տարեկանում հայրս ինձ ուրիշ աշխարհ տարավ: Հորս սիրով շարված ու աշխարհից բանտող պատը ինձ գնալով ավելի էր նեղում: Ես ուրիշ աշխարհ էի ուզում, ես կյանք էի ուզում, հաճույքներ, որ հասու էին իմ հասակակիցներին, բայց ոչ ինձ. ես դժբախտ էի ծնվելուս պահից: Կոկորդիս էր տարիների մաղձը. ուզում էի փախչել տնից, հորիցս ու գտնել բախտ ազատության մեջ:

Հերթական՝ մյուս օրերից ոչնչով չտարբերվող մի օր, հայրս առաջարկեց ինձ ամուսնանալ Եսթերի հետ, մի աղջկա, որ մեր ընտանիքի բարեկամուհին էր: Սա չափազանց էր. ես չէի կարող դիմանալ, ինչպես չէր դիմանա նեղ հագուստը գեր մարդու մարմնին: Հորիցս պահանջեցի իր ունեցվածքից ինձ բաժին ընկնող մասը, որ թերևս միայն իր մահվանից հետո պիտի ինձ հասներ, բայց սպասելու ժամանակ չկար և ինչո՞ւ սպասել: Դա անարգանք էր հորս համար. նույնն էր, որ ասեի՝ ինչ տարբերություն, թե երբ կմեռնես, համարենք՝ մեռել ես, իմ բաժինը տո՛ւր: Հայրս ապտակելու փոխարեն գլուխն արագ թեքեց ինձանից ու դուրս եկավ: Մի ժամ չանցավ, երբ ծառաներն իմ հարստությունն ինձ ներկայացրին: Ես վաճառեցի ամենն ու գումարը ձեռքիս՝ գնացի այն աշխարհը, որի մասին էին բոլոր մտքերս:

Շատ էի ուզում ամեն ինչ ճիշտ անել, բայց սխալվեցի: Մի սխալին հաջորդում էր մյուսը. կրքեր, վայրկենական հաճույքներ, որոնք ինձ պիտի զրկեին հավիտենականից՝ երջանկությունից: Մի օր էլ արթնացա հասկանալով, որ այլևս գումար չունեմ: Ու կորան ամենքը, ընկերները կորան, որ մի ժամանակ սիրում էին ինձ. անառակ կնոջ պես, որ միայն գումարով է ունակ սիրելու (չնայած, որ հենց ես մնացի պատմության մեջ «անառակի» պիտակով): Անճարությունից դարձա խոզապան. անասուն պահելը միակ բանն էր, որ գիտեի: Մի օր խոզերի առաջ ջուր լցնելուց՝ ջրի մեջ իմ արտացոլանքը տեսա (մարդու դեմքին դաջվում է իր կյանքը. մեկ հայացքը հերիք է մարդուն ճանաչելու համար). իմ այլասերված աչքերում միայն մեկ բան կար՝ հիասթափություն: Ինձնից էի հիասթափվել. ես իրականում ավելի վատին էի արժանի: Ես կործանված մեկն էի՝ անթաղ մնացած մի մեռել, որը մեռավ սովից՝ ոչ թե ուտելիքի, այլ՝ կրքերի: Իմ հոգեհանգստին միայն ես էի հրավիրված. և՛ մեռելն էի ես, և՛ սգավորը, որը, սակայն, ունակ չէր անգամ արտասվելու. դա բարի մարդկանց հատկանիշն է: Կայնքը կորցնելուց հետո ես էլ ոչինչ չունեի կորցնելու. որոշեցի տուն վերադառնալ: Տնից հեռանալուց երբեք հետ չնայեցի. վերադարձին էլ չէի նայում: Տան ճանապարհին հայրս ընդառաջ վազեց, ես նրա ոտքերն ընկա՝ ներում հայցելու, իսկ նա ձևացրեց, թե ամեն օրվա պես անասուններին արածեցնելուց եմ վերադարձել: Ու հասկացա, որ ավել բանի կարիքը չունեմ, որ ունեմ ամենաթանկն աշխարհում՝ ընտանիքը, որտեղ միշտ սպասում են, որտեղ սիրում են՝ անկախ քո՝ դրան արժանի լինելու չափից: Ես առաջ ունեի ավելին, քան հիմա, բայց այդ պահին ունեցածս ինձ ավելի թանկ թվաց, քան երբևէ:

Ես մեկն եմ, ով ծառայից դարձավ որդի:

Հայր

Ես երջանիկ մարդ էի ինձ համարում, այնպես, ինչպես բոլոր նրանք, ովքեր դեռ չեն հանդիպել դժվարության: Ամեն ինչ ընթանում էր երջանկությանը համապատասխան, երբ մի

օր կրտսեր որդիս ապտակեց ինձ լոկ մի արտահայտությամբ. իր հասանելիք ժառանգությունն էր ուզում: Աչքերս դողացին արցունքոտվելու չափ, արագ գլուխս թեքեցի ու դուրս եկա: Դուրս եկա, որ նա չտեսներ արցունքներն իմ, դուրս եկա, որ չզգար թափն իմ ձեռքի… Երկար մտածում էի՝ ի՞նչ անել: Արգելելը սխալ էր (տարիներ առաջ իմ հայրն ինձ թույլ էր տվել հեռանալ)՝ ես իրավունք չունեի նրան արգելելու: Ուղարկեցի իր հասանելիք հարստությունն ու հայրական կարոտով նայեցի նրա ճանապարհին, մինչ հորիզոնում կորչելը. վստահ էի, որ չի շրջվի: Այդ օրվանից հետո երբեք դուռը չփակեցի, ոչ մի վայրկյան. վստահ էի՝ հետ է գալու: Ես գիտեի, որ կյանքում կան ճշմարտություններ, որոնք պետք է և կարելի է հասկանալ միայն սեփական փորձով: Եվ բնական է երբեմն սայթաքելը, կարևորը՝ կանգնելու համար անհրաժեշտ ուժ գտնելն է: Իմ որդին էր. պիտի վերադառնար: Ամեն օր նայում էի տուն բերող ճանապարհին՝ հուսով, թե քամիները, որ միայն փոշի էին բերում, մի օր էլ որդուս տուն կբերեն: Երեկոները ճաշում էի ավագ որդուս հետ. վախենում էի նրան էլ կորցնելուց:

Մի օր էլ հայացքս անհունին հառած՝ աղոթում էի Հորը՝ որպես որդի, աղոթում էի, որ վերադարձնի որդուս, որ ես նրան լինեմ հայր, նա ինձ՝ որդի: Աղոթքն ավարտելուն պես բացեցի աչքերս ու հեռվում նկատելով որդուս՝ վազեցի ընդառաջ. իմ կորած որդին գտնվեց, իմ մեռած որդին հարություն առավ: Անճանաչելի էր դարձել, ներողություն էր խնդրում չարություն արած երեխայի պես, ես էլ ինչպես միշտ ներեցի նրան. նա հաղթեց իրեն ու վերադարձավ: Պատվիրեցի խնջույք կազմակերպել: Երեկո էր, երբ ասացին, թե ավագ որդիս եկել է դաշտից, բայց չի ուզում տուն մտնել: Անհանգիստ դուրս եկա: Անձրև խոստացող երկնքի պես խիստ էր հայացքը նրա և լի բարկությամբ: Բառեր չկային, հայացքն էր խոսուն. մեղադրում էր ինձ իրեն նույնքան չսիրելու մեջ (բայց մի՞թե մարդն իր մի աչքը սիրում է մյուսից ավելի): Ես սիրում էի նրանց՝ առանց խտրականության և առանց պատճառի, սիրում էի, որովհետև իմ որդիներն էին:

«Մեռած եղբորը ոչ թե պետք է սպանել արհամարհանքով, այլ կենդանացնել՝ սիրով»,- ասացի ու գրկեցի նրան, ինչպես տարիներ առաջ, երբ նա չարություն էր անում:

Ես մեկն եմ, ով ունեցավ երկու որդի, կորցրեց երկուսին էլ, բայց վերջում գտավ:

Ավագ Որդի

Ես այս պատմության մեջ, ինչպես և իրական կյանքում, մնացի անկարևոր, երկրորդական կերպար, որի ներկայությունը միայն պատմության ճշմարտացիությունը փաստելու նպատակ ունի: Ես դեռ փոքրուց անում էի ամեն ինչ հորս սիրուն արժանանալու համար, բայց անօգուտ. նա կրտսեր եղբորս ավելի էր սիրում: Իմ մանկական հուշերում դաջված է առաջին հիասթափությունը, երբ հայրս օտար աշխարհ գնալուց իմ փոխարեն կրտսեր եղբորս իր հետ տարավ: Կարծո՞ւմ եք՝ ես չէի ուզում գնալ: Ես չափահաս էի ու արդեն հմուտ հողագործ: Մտածում էի՝ օտար աշխարհում սիրուն աղջիկներ կլինեն, գեղեցիկ տներ… գուցե և կան, ինչ իմանամ. էդպես էլ երբեք չգնացի:

Իմ աշխարհը մեր այգին էր: Իմ աշխարհն այնքան փոքր էր, որ սահմանափակվում էր էր չորս ցանկապատի արանքում և որի մեջ հազիվ 300 եզ ու գուցե նաև ես կտեղավորվեինք (ի՞նչ իմանամ, հնարավոր է՝ թիվը ճիշտ չեմ ասում. երբեք անասուն չեմ պահել): Ես էլ էի հոգնել, այնպես, ինչպես հոգնել էր եղբայրս, ես էլ էի ուզում փախչել, միայն թե, ի տարբերություն նրա, ես փախչելու հիմք չունեի. ես հորս շատ էի սիրում: Երբ նա գնաց, ես հուսով էի, թե հայրս ինձ կսկսի կրկնակի սիրել, բայց՝ ապարդյուն: Նա ամեն օր նայում էր եղբորս ճանապարհին, այնպես, ինչպես նրա գնալու օրը: Ես ինձ ծառա էի զգում, ոչինչ ավելի. հայրս ամեն օրվա աշխատանքիս դիմաց վճարում էր ինձ՝ մեկ միասին անցկացրած ընթրիքով: Ես վստահ էի, որ հորս մյուս որդին չի վերադառնա: Վերադառնար էլ՝ Կայենի նման կսպանեի նրան:

Վերադարձավ։ Զայրույթս եռակի էր. նա վերադարձել էր և հակառակ իմ սպասումների՝ կենդանի, հայրս նրան ընդունել էր՝ պատժելու փոխարեն, մորթել էր իմ եզը՝ այն եզը, որն իմ ժառանգության մասն էր։ Իր ժառանգությունը վատնել, վերադարձել էր իմը վատնելու։ Ոչինչ չասացի հորս. մեկ է՝ չէր հասկանա։ «Մեռած եղբորը ոչ թե պետք է սպանել արհամարհանքով, այլ կենդանացնել՝ սիրով»,- ասաց՝ պետք է՝ հրամայելու պես, ես էլ, ինչպես միշտ, արեցի նրա ասածը՝ մի փոքր ավելի սիրո արժանանալու ակնկալիքով և դրա չիրականանալու իրատեսությամբ։

Ես մեկն եմ, ով որդուց դարձավ ծառա։

Հեղինակ՝ Հովհաննես սրկ. Ավետիսյան